Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն՝

_____Պ. Սանթրոսյան

23.10.2018 թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն աշխատակարգով սահմանվում է Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի (այսուհետ՝Համակարգ) աշխատանքային գործունեության կարգը գործառույթները և նպատակները և խնդիրները:

1.2 ենթակառուցվածքը իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրության համաձայն, ինչպես նաև Քոլեջի կանոնադրությանն ու սույն կարգին համապատասխան:

1.3 ենթակառուցվածքը սույն կարգով սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է Քոլեջի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ:

1.4 ենթակառուցվածքի գործունեությունը ֆինանսավորվում է Քոլեջի կողմից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Քոլեջի կանոնադրությամբ թույլատրված այլ միջոցներից:

2. *Նպատակներն.*

2.1 Նպաստել Քոլեջի առաքելության և ռազմավարական ծրագրի իրագործմանը և արդյունավետության բարձրացմանը,

2.2 ենթակառուցվածքի հիմնական նպատակը Քոլեջի ներքին որակի վերահսկման, դրա մշտադիտարկման, գնահատման ու բարելավմանն ուղղված մեխանիզմների մշակում է,

2.3 ձևավորել այնպիսի գիտակցություն, որ որակի ապահովումը շարունակական գործընթաց է՝ որակի անվերջ բարելավման միտումով,

2.4 ստեղծել սերտ կապ ստորաբաժանումների միջև՝ նպատակ ունենալով ոչ թե մրցակցության այլ փոխօգնության:

3. *Խնդիրները.*

3.1 Կրթական ծրագրերի պարբերաբար վերանայման, գնահատման և շարունակական բարելավման ապահովում,

3.2 պրոֆեսորադասախոսական կազմի անընդհատ կատերլագործմանն ուղղված գործընթացների ապահովում,

3.3 տեղեկատվության հասանելիության ապահովում ներքին և արտաքին շահակիցներին,

3.4 ներքին շահառուների կարիքների վերհանում և դրաց ուղղված աշխատանքների իրականացում և բարելավում:

4. *Ենթակառուցվածքի գործունեության հիմնական ուղղությունները.*

4.1 Քոլեջի ներքին որակի ապահովման գործընթացների համակարգումը, մեխանիզմների կիրառելիության արդյունավետության բարելավում,

4.2 ՄԿԾ-ում դասավանդման մեթոդների, ռեսուրսների և գնահատման մեթոդների մեխանիզմների բարելավում,

4.3 դասալսումների կազմակերպում, քննարկում, խնդիրների վերհանում,

4.4 ուսումնառության նոր մեթոդների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում,գնահատում և բարելավում,

4.5 ուսանողների դիմումների քննարկում՝ ուղղված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպմանը,

4.6 դասախոսների լրացուցիչ պարապմունքների, վերապատրաստումների կազմակերպում՝ ուղղված դասավանդման և մասնագիտական որակների բարձրացմանը,

4.7 համակարգի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների կազմում:

5. *Ենթակառուցվածքի աշխատանքի կազմակերպումը.*

5.1 Ենթակառուցվածքը իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով,

5.2 հերթական նիստը գումարվում է ամիսը մեկ անգամ, եթե այլ որոշում չի կայացվում,

5.3 նիստերն արձանագրվում են,

5.4 Ենթակառուցվածքի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Քոլեջի տնօրենը, դասախոսները, ուսանողները, արտաքին շահառուներ: